Ծրագիրը համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Իրականացնող՝
Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Գործընկեր՝
Եվրոպական լրագրության կենտրոն

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

27 սեպտեմբեր, 2018թ.
ք. Երևան

Առավել տեղեկացված հասարակություն և պետական բյուջեի վերահսկողություն. մեկնարկեց «Իրազեկ Հայաստան» ծրագիրը

2018 թվականի սեպտեմբերի 27-ին Երևանում կայացավ Եվրոպական միության կողմից համաֆինանսավորվող «Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար» ծրագրի բացման արարողությունն ու գլխավոր վերապատրաստման դասընթացի մեկնարկը, որին մասնակցում էին Եվրոպական միության դեսպան Պյոտր Սվիտալսկին, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ, Մաաստրիխտում գործող Եվրոպական լրագրության կենտրոնի միջազգային փորձագետներ, ինչպես նաև ներկայացուցիչներ ԵՄ-ից, քաղաքացիական հասարակության կազմակերպություններից և լրատվամիջոցներից:

Միջոցառումը կազմակերպվել էր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ Եվրոպական միության համաֆինանսավորմամբ, Մաաստրիխտում գործող Եվրոպական լրագրության կենտրոնի հետ համագործակցությամբ:

Ծրագրի բացման արարողությանը ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ-ում ԵՄ դեսպան Պյոտր Սվիտալսկին, Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյանը:

«*Քաղաքացիական հասարակությունը և լրագրողները կարևոր դեր են կատարում տեղեկատվություն ստանալու, վերլուծելու և այն երիտասարդներին ներկայացնելու հարցում այնպես, որ վերջիններս կարողանան հասկանալ սոցիալական կարևոր խնդիրները: Հուսով եմ՝ այս ծրագիրը կդառնա ժամանակին և լիարժեք տեղեկություն ստանալու միջոցներից մեկը, որը հնարավորություն կտա Հայաստանի բոլոր քաղաքացիներին հետևել ներկա քաղաքական փոփոխություններին, ինչպես նաև տեղեկանալ բարեփոխումների և բյուջեի հատկացումների վերաբերյալ նախատեսվող կարևոր որոշումներին*»,- իր բացման խոսքում նշեց դեսպան պարոն Սվիտալսկին:

«*Տեղեկատվության ազատությունը հզոր գործիք է հետաքննող լրագրողների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար, քանի որ նրանք ամրապնդում են իրենց վերահսկողության ունակությունները և կառավարությանը պատասխանատու են դարձնում հասարակության առջև: Հուսով ենք՝ այս ծրագիրը օգտակար կլինի ՔՀԿ-ների համար իրենց հսկող գործառույթը ավելի բարձր մակարդակով իրականացնելու հարցում*»,- իր խոսքում նշեց Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյանը:

Գլխավոր վերապատրաստման դասընթացի մեկնարկին ծրագրում ներգրավված փորձագետները ներկայացրին նաև իրենց կողմից իրականացվող մարզային դասընթացների բովանդակությունը:

Պետական բյուջեն կառավարական ամենակարևոր գործիքներից է, որի միջոցով իրականացվում է կառավարության քաղաքականությունը: Այնինչ, Հայաստանի շատ քաղաքացիներ, հատկապես երիտասարդները, տեղյակ չեն, թե ինչպես է պետական բյուջեն ծախսվում: «Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար» ծրագիրը նպատակ ունի ապահովել, որպեսզի լրագրողները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ստեղծեն և տարածեն մատչելի տեղեկություններ և հոդվածներ, ինչպես նաև նպաստեն Հայաստանում բյուջետային միջոցների բաշխման և ծախսման վերաբերյալ իրական հանրային քննարկմանը:

Ծրագրի նպատակն է ամրապնդել քաղաքացիական հասարակության վերահսկողական գործառույթը, մասնավորապես ԵՄ-Հայաստան հարաբերություններին շրջանակին առնչվող ոլորտներում պետական բյուջեի վերահսկողությունը, ինչպես նաև՝ երիտասարդների շրջանում հետաքննական լրագրության խթանումը:

Կոնտակտային անձ

Աստղիկ Վարդանյան
Ծրագրի հանրային կապերի պատասխանատու
Հեռ.՝ +374 (93) 64 07 57
Կայքէջ՝ www.foi.am
ՖԲ @FOICenterArmenia